



ԷՅ.Ի.ՋԻ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ



Պայմանագիր

ԳԱԶԱՍՊՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ



ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 8-13

ԳԱԶՍՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՐԵՐՄԱՆ

ք. Երևան

«05» փետրվարի 20/14 թ.

Պրոմեթիոն Եւրոպայի Երկրագործական ընկերություն
(կազմակերպության, ձեռնարկության անվանումը)

(այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Պրոմեթիոն Եւրոպայի Երկրագործական ընկերություն

որը գործում է Կազմակերպություն հիման վրա և
(կանոնադրություն, լիազորագիր)

«Է-Ի-Ջի-Սերվիս» ՍՊ Ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս Ընկերության Գլխավոր տնօրեն Արսեն Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է կատարել Պատվիրատուի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքներ /պլանային և արտահերթ՝ վրարային սպասարկում/, որոնք սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածում /այսուհետ՝ Ծառայություն/:
- 1.2 Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայությունները Կատարողի կողմից իրականացվում են հետևյալ պարբերականությամբ**

- ամիսը մեկ անգամ
- երկու ամիսը մեկ անգամ
- եռամսյակը մեկ անգամ

*Պայմանագրի համար գործում է Պայմանագրի 1.2 կետում ընդգծված պարբերականությունը

* Եռամսյակ է համարվում ֆինանսական տարվա եռամսյակը

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.1 Կատարողի մատուցած ծառայությունների դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել 101468 դր. (Տեղ հարյուր Տեղ հարյուր չորս հարյուր վաթսուցուհարյուր) ՀՀ դրամ, /ԱԱՀ-ն ներառվում է/:
- 2.2 Պայմանագիրը կնքելուց հետո Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պատվիրատուն վճարում է կանխավճար, իսկ պայմանագրի 2.1 կետով նախատեսված գումարի մնացած մասը կատարողին վճարվում է մատուցված ծառայությունների վերաբերյալ կազմված կատարողական փաստաթղթերի և հաշիվ-ապրանքագրերի հաստատումից /ստորագրումից/ հետո՝ 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.3 Պատվիրատուի կամ նրա ներկայացուցչի կողմից համապատասխան փաստաթղթերի (հանձնարարական ամփոփագիր, գազասարձման համակարգում տեխնիկական սպասարկման աշխատանքների հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր) հաստատումը (ստորագրումը) նշանակում է Պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունների ընդունում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1 Կատարողը պարտավոր է՝
 - 3.1.1 Ծառայությունները մատուցել Պատվիրատուի գազասարձման համակարգի գտնվելու վայրում՝ Պատվիրատուի իրավաբանական և/կամ գործունեության հասցեում՝ Չիբուճակի մարզ Բ. Չիբուճակի Չիբուճակի ՇՂ:
 - 3.1.2 Ծառայությունները մատուցել պրոստիտուտի, 1.2 կետում նշված կարգով, ՀՀ օրենսդրության և Կատարողի ներքին իրավական ակտերին համապատասխան,
 - 3.1.3 Պատվիրատուի գազամատակարարումը դադարեցվելու դեպքում Պատվիրատուի հետ կատարել վերջնական հաշիվարկ:
 - 3.1.4 Պատվիրատուի գազասարձման համակարգում /Հավելված-ում նշված/, բերություններ, անսարքություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին ծանուցել Պատվիրատուին:
- 3.2 Պատվիրատուն պարտավոր է՝
 - 3.2.1 պահպանել գազասարձման համակարգի շահագործման անվտանգության

- կանոններն ու պահանջները, ինչպես նաև, օգտագործվող սարքավորումների գործարանային հրահանգների պահանջները,
- 3.2.2 գազասարձման համակարգում չօգտագործել ինքնաշեն սարքավորումներ,
- 3.2.3 արգելել բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների և պահանջների վերաբերյալ հրահանգավորում չանցած անձանց՝ գազասարձող համակարգի շահագործումը,
- 3.2.4 Կատարողին տրամադրել՝ իր գազասարձման համակարգում հայտնաբերված թերությունների, անսարքությունների վերացման համար անհրաժեշտ, փոխարինման ենթակա սարքերը, պահեստամասերը,
- 3.2.5 Կատարողին ներկայացնել օբյեկտի գազատարների և գազասարքավորումների նախագծման և կատարման տեխնիկական բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև հետագայում դրանցում կատարված փոփոխությունները՝ փոփոխությունները կատարելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում,
- 3.2.6 թույլատրել Կատարողի աշխատակիցների (ներկայացուցիչների) մուտքը կազմակերպության տարածք և չխաչընդոտել նրանց կողմից իրենց պարտականությունների կատարմանը,
- 3.2.7 գազամատակարարման դադարեցման ակտի ստեղծման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին ներկայացնել ակտի կրկնօրինակը,
- 3.2.8 ողջամիտ ժամկետում վերացնել գազասարձման համակարգում տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ընթացքում Կատարողի կողմից հայտնաբերված և իրեն ծանուցված խախտումները կամ թերությունները՝ ապահովելով դրանց հուսալիությունը և աշխատանքի, մարդկանց կյանքի և գույքի անվտանգությունը:
- 3.3 Կատարողն իրավունք ունի՝
 - 3.3.1 ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը և որակավորումը,
 - 3.3.2 միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի 2.1 կետում նշված գինը՝ Պատվիրատուի կողմից շահագործվող՝ Հավելվածում նշված սարքավորումների քանակի կամ 3.2.5 կետում նշված փաստաթղթերի փոփոխության դեպքում:
- 3.4 Պատվիրատուն իրավունք ունի՝
 - 3.4.1 հետևել Կատարողի կողմից կատարվող աշխատանքների գործընթացին և որակին՝ ստանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
 - 3.4.2 անհրաժեշտության դեպքում Պայմանագրի 1.1 կետին համապատասխան պահանջել Ծառայությունների արտահերթ մատուցում:

**4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 5.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում «06/11/2014» թվականից և գործում է սույն պայմանագրի հավելվածով նախատեսված ժամկետով:
- 5.2 Կանչերը բնորոշվում են աշխատանքային օրերին և ժամերին 093256905, 094698924 հեռախոսահամարով:
- 5.3 Պայմանագրի շրջանակներում որպես Պատվիրատուի ներկայացուցիչներ լիազորված են հանդես գալ
1. պապո շհ. Ռոստոմյան
2. _____
- 5.4 Պատվիրատուի պարտավորությունների չկատարման արդյունքում առաջացած վնասների ռիսկը կրում է Պատվիրատուն:
- 5.5 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.6 Գազապատման համակարգի նորոգումների, վերականգնման, վերակառուցման աշխատանքների իրականացումը Պատվիրատուի կողմից այլ անձանց պատվիրելու և վերջիններիս կողմից կատարելու դեպքում, Կատարողը հնարավոր հետևանքների համար պատասխանատվություն չի կրում:
- 5.7 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավասունական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Մարտիրոսյան
Վահագնյան
Վարդանյան շհ
Ի/Ի/ 04415276

Շհ. Ղազարյան շհ



«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Արմենի 10
Հեռ.՝ (010) 29-75-27, 20-94-60
ՀՎՀՀ 00930884
Հ/Հ 2380004577500100

«Առևկախիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ

